



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՒ  
ՀԻՒՄԱՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՍՏԵԱՆ ԹԵՍԻ  
WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**Archbishop Moushegh Mardirossian, Prelate**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## **ԹԵՍԻՍ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՅՉՎԱԿԱՆ ԿԱՇՄԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

Մանուկներու եւ պատանիներու կրօնադաստիարակչական եւ հայեցի կրթութեան նուիրուած մեր Կիրակնօրեայ Դպրոցները կը վայելեն անվերապահ հոգածութիւնն ու հովանաւորութիւնը Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի: Կամաւոր եւ գիտակից ուսուցչական կազմերու խնամքին եւ հոգածութեան յանձնուած երկսեռ աշակերտութեան՝ ամեն Կիրակի մեծ սիրով, համբերութեամբ եւ աչալուրջ յանձնառութեամբ կ'ուսուցուին աւետարանական պատումներ եւ աստուածաշնչական դրուագներ, սաղմոս, աղօթք, շարական ինչպէս նաեւ կրօնական եւ եկեղեցագիտական ծանօթութիւն կը ջամբուի մեր նոր սերունդի զաւակներուն: Իսկ ուսուցչական կազմեր, յաճախակի հանդիպումներով, միօրեայ կամ երկօրեայ դաստիարակչական ընոյթի հոգեշահ համագումարներ կը կազմակերպեն, նպատակ ունենալով ի մի խմբել մեր Թեմի Եկեղեցիներու ուսուցչական կազմերը եւ անոնց փոխանցել անհրաժեշտ գիտելիք՝ հայ Եկեղեցւոյ պատմութեան, դաւանանքին, տօնակարգին թէ Եկեղեցագիտական նիւթերու մասին:

Հիւրընկալութեամբ Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցին, նման հանդիպում-հաւաք մը տեղի ունեցաւ նախաձեռնութեամբ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակին եւ կազմակերպութեամբ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմնին՝ Շաբաթ, 24 Փետրուար 2007-ի յետ միջօրէ ժամը 2:00-ին 5:00: Յամագումարին կը մասնակցէին շուրջ քառասուն ուսուցչ-ուսուցչուիներ, կրօնական դաստիարակութեան գրասենեակի վարիչներ՝ Գերապ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգշ. S. Պարթեւ Վրդ. Կիւիւմեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւներէն Արժ. S. Կոմիտաս Քիոյ. Թորոսեան:

Յաւաքական կարծ աղօթքէ Ետք, Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, գնահատական եւ քաջալերական խօսքերով վեր առաւ դաստիարակչական ընոյթով կազմակերպուած նման հաւաքներու անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը, եւ այս առթիւ Մեծ Պահոց շրջանին կազմակերպուած ուսուցչաց երկրորդ միօրեայ սոյն հաւաքին իր թելադրութիւններն ու բարեմաղթութիւնները ըրաւ, ըլլալ ծառայասէր, հեռու մնալ անձնասիրութենէ ու անձնակեդրոն կեանքէ, նուիրուիլ աղօթանուեր կեանքի, բարիք գործել եւ բարիք սփոթել եւ առաքինութեան գործերու նախանձախնորի ըլլալ:

Ապա, համագումարին մասնակիցներ լուսապաստարի վրայ հետեւեցան Յայր Միւռոնի ներկայացուցած դասախոսութեան: Դասախոսութեան նիւթեն էր՝ «Մեծ Պահօք եւ Մեծ Պահոց Կիրակիները»: Ան լուսապաստարի վրայ մանրամասն ներկայացուց Մեծ Պահօք աստուածաշնչական ըմբռնումն ու Մեծ Պահոց Ութը

Կիրակիները: Այսպէս, հոգեւոր ուղեւորութիւնը սկսաւ Բուն Բարեկենդանն եւ աստուածաշնչական դեպքերն ու դրուագները ներկայացնելով՝ մանրամասն բացատրութիւններ եւ նկարագրական լուսաբանութիւններ տուաւ Արտաքսման, Անառակի, Տնտեսի, Դատաւորի, Գալստեան Ծաղկազարդի Կիրակիներուն, ինչպէս նաեւ Աւագ Շաքթուան Տերունի դեպքերուն մասին, հասնելով մինչեւ Քրիստոնեական եկեղեցւոյ անկիւսաքարը հանդիսացող Քրիստոսի մահուան վրայ տարած յաղթանակին՝ հրաշափառ Ս. Յարութեան: Յայր Սուրբը մեջընդմէջ անդրադարձաւ Մեծ Պահոց Կիրակիներու աւետարանական, բարոյական եւ կրօնական-հոգեւոր իմաստներուն եւ տուաւ գործնական օգտակար ցուցմունքներ եւ թելադրութիւններ: Իսկ Յայր Պարթեւ կատարեց Արեւագալի եւ Մեծ Պահոց Կիրակիներուն երգուելիք շարականներու ներկայացումը եւ մեկնաբանութիւնը, շեշտելով որ երգը մեր ներաշխարհի ապրումներուն, յոյզերուն եւ զգացումներուն, ինչպէս նաեւ պատմական դեպքեր եւ պատումներ նկարագրելու եւ ներկայացնելու կենդանի, հաղորդական ու անմիջական դրսեւորում Ե: Մասնաւորաբար մեր շարականները, ըսաւ գեկուցաբեր Յայր Սուրբը, որպէս գրական սեռ, ուսին հոգեւոր, դաստիարակչական բնոյթ՝ աստուածաշնչական դեպքեր, հրաշքներ եւ սրբոց վարքը նկարագրելու եւ աւետարանական ու բարոյական ճշմարտութիւններ ուսուցանելու, դաստիարակելու, քաջալերելու եւ դեպի Աստուած առաջնորդելու: Շարականներու մասին ընդհանուր գաղափար եւ բացատրութիւններ տալէ ետք, Յայր Պարթեւ ներկայացուց եւ սորվեցուց Արեւագալի եւ Մեծ Պահոց Կիրակի օրերուն երգուող յատուկ շարականները:

Դասախոսութեանց եւ գեկոյցներու աւարտին, տեղի ունեցաւ հարց-պատասխանի բաժին, ուր յաւելեալ լուսաբանական եւ գոհացուցիչ տեղեկութիւններ փոխանցուեցան:

Յամագումարին մասնակցող ուսուցիչ-ուսուցչուիիներ առիթ ունեցան նաեւ իրենց կիրակսօրեայ դպրոցներու վերաբերեալ մտահոգութիւններ եւ կրօնադաստիարակչական ծրագիրներուն առնչուող հարցեր արծարծել: Այս առթիւ, Կիրակսօրեայ Դպրոցներու Տեսուչներուն յանձնուեցաւ լսարանային բաժնի դասընթացքներու եւ կիրակսօրեայ դասաւանդութեանց ծրագրի օրինակներ, պատրաստուած՝ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակին կողմէ:

Յաւաքը խմբային նկարով «Կիրակսօրեայ սուլր յարկին» մաղթանք քայլերգի երգեցողութեանմբ եւ փակման աղօթքով՝ Կիրակսօրեայ դպրոցներու ուսուցչաց միօրեայ հաւաքը վերջ գտաւ յետ միջօրեի ժամը հինգին: Կիրակսօրեայ դպրոցներու ուսուցչակազմեր՝ նոր գիտելիքներով եւ հոգեւոր ծանօթութիւններով հարստացած, գոհունակ մեկնեցան եկեղեցւոյ շրջափակեն, վերահաստատելով իրենց յանձնառութիւնը եւ նուիրումը՝ իրենց խնամքին յանձնուած հայ մանուկներն ու պատասխաները կրօնական եւ հայեցի առողջ կրթութեամբ դաստիարակելու, եւ նման շինիչ ու օգտակար հաւաքներ եւ առիթներ յաճախ կազմակերպելու:

## WESTERN PRELACY SUNDAY SCHOOL TEACHERS' ONE-DAY SEMINAR

Directors and teachers of Prelacy Sunday Schools gathered at St. Mary's Church in Glendale on Saturday, February 24, 2007, for a one-day seminar that was held under

the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Sunday School Directorate. Similar gatherings take place regularly with the directive of the Prelacy Christian Education Department to provide supplementary information to our Sunday Schools' instructors on topics including church history, sacraments, calendar, and various other subject matters. In addition to Christian Education Department Co-Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, Rev. Gomidas Torossian, Pastor of St. Mary's Church, participated in the gathering along with about 40 teachers.

Following the opening prayer, the Prelate commended the organizing of the gathering, stressing the need for further educational seminars. The Prelate then advised the participants to be devoted in their service, to live a selfless and God-pleasing life, and to perform good deeds.

During the lecture portion of the seminar, in a lecture titled "The Sundays of Great Lent", Hayr Muron presented in detail the eight Sundays of Lent, from Paregentan to Easter Sunday, while Hayr Barthev presented and taught hymns unique to the Sundays of Lent. A question and answer session followed. Throughout the seminar, teachers were also offered the opportunity to voice their concerns about issues relating to religious education instruction. In turn, the directors were given guidelines and examples of Sunday School curricula which were prepared by the Christian Education Department,

The seminar concluded with a group picture, the singing of the Sunday School anthem, and the closing prayer.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](#) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.